

դէնք ՚ի կատար հասուցանելու ազ-
գայնութեան այն հրաշալի տաճարը՝
որոյ անկեան քարերուն վրայ մեր նա-
խահարք արիւն և բրտինք թափած են
Սանեհր ուրեմն այսպէսնոց ս ժառան-
գութեան մէջ Հայկազուն մանկունք,
յորդուց յորդի ազգի յորստեւու-
թեան և պայծառազարդութեան կը
տակը աւանդենք և այնուհետեւ մեր
Նոյն կամ Նիկեղեցին իբրեւ հինօրեայ
արձան, իբրեւ ամենակերպ անցքե-
րով քանդակուած կոթող, իբրեւ քը-
րխտոնեական կենաց սրտակեր՝ համար-
ձակ կարող է բարձրացնել իւր աշ-
խարհատես գլուխն և աներկիւզ ա-
ղաղակել. « Յորդահոսան հեղեղներ,
բազմածուփ ալիքներ, հալածանաց
շանթեր, խորամանկութեանց գաղտ-
նի մուրճեր, յուզեցէք, բորբոքեցէք,
թափեցէք ձեր զօրութիւնը, ձեր կա-
տաղութիւնը ու կործանմունքը, ես իմ
ազատ կրօնքով և նահատակացս ար-
եամբ կենդանի եմ և յաւերժ անսա-
սան տիեզերաց աւերակաց միջ »:



ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵՀ, ՀԱՀԱՊ, ԿՈՐԻՒՆ

(Հարունակութիւն և վերջ տես թիւ 81)

Կորիւն.— Ստիկընք ուրեմն, մարդ,
եթէ իւր աշխատութիւնը արդարու-
թեան վրայ հիմնէ, և խոհեմութեամբ
ու հաստատուն յարատեւութեամբ
աշխատի, չեմ կարծեր որ անպտուղ
և անվարձ մնայ, ամեն աստիճանի և
վիճակի մարդ, սւսանող աշակերտէն
և ստորին գործաւորէն միտեալ մինչև

ամենամեծ կարողութեան տէր վաճա-
ռականը, արհեստաւորը և խմատուն
գրագէտը, վերջապէս մարդ մը երբ
իրեն ըստանձնած պարտուց մէջ ար-
դարութեան ճանրէն կը շեղի, վախճա-
նը անպատուութիւն, կործանումն և
կորուստ է, ամեն տեսակ անյաջողու-
թիւն և արդելք իրեն ամեն քայտիտ
խին մէջ պատրաստ է՝ յս ըսելով հաս-
տատել չեմ ուղիւ թէ արդարու-
թեամբ աշխատողներուն ձախտողու-
թիւն չի պատահիր, քան լիցի. բնա-
կան և անխուսելի դիպուածներ կան
որոց ենթակայ է ամեն ոք, բայց հա-
ւատարիմ առաքինի անձը՝ մոլութենէ
պատահած բազմադիմի վարձանքնե-
րէն ազատ ըլլալէ զատ, իւր արդարու-
թիւնը, պարկեշտութիւնը և հաւա-
տարմութիւնը ղենքը փրկող կարեկից
ու բարեսէր սրտեր կը գտնէ. իսկ մա-
լինքը քանի մի անգամ զայս խա-
բէլէն վերջը անօգնական կը մնան, և
կրաւամբ, արդարութիւն է որ այնպի-
սիներն ընկերութենէ մերժուելով ան-
խնամ մնան առ ժամանակ մի մինչև
ուղղութիւն, վասն զի իրենց սիրտն այն-
չափ աւրուած ու չարացած կ'ըլլայ,
որ ուրիշին բարեսէր ձեռնտուութիւ-
նըն ալ չարաչար կը գործածեն, որով
արդարութեան պատահասը կը կրեն
միշտ, ուրեմն ըսեւ ասորեւուն ճամբան
արդարութիւնն ու առաքինութիւն է:

Զարեհ.— Մա, այդ բոլոր ըսածնե-
րդ ճշմարտութիւններ են, բայց մեր
խօսակցութեան հետ ի՞նչ վերաբե-
րութիւն ունին:

Կորիւն.— Հատ մերձ վերաբերու-
թիւն ունին. նախ ընդունեցէք ըսած-
ներս . . . :

Հակադ.— Իմ խելքս չի հասնիր, հի-
մա աշխարհի մէջ ոչ ճշմարտութեամբ
և ոչ արդարութեամբ, այլ խաբես
խաբեսով է որ գործ կը տեսնուի:

Կրի-ն. — Ենթո համար է որ օր բա-
օրէ հաւատարմութիւնն ալ կը պահի
և մարդիկ միշտ կ'ստիպածաւոր կ'ըլլան
և իրարու գէշ աչօք կը նային: Բայց
թողունք այս և ուրիշ կողմ դառնանք,
քանի որ դու խաբէրու կը յօժարիս,
ուրեմն ինչո՞ւ կը զայրանաս՝ երբ այլք
եւս զքեզ կը խաբեն. չէ՞ որ աշխարհ
հի գործերը փոխադարձութիւններ
են, ինչ որ ընես նոյնը կը գտնաս:

Հակապ. — Ես բնաւ մտդ չեմ խա-
բած, և ահա ասոր համար կը զայրա-
նամ, որ ինչո՞ւ միշտ զիս կը խաբեն:

Կրի-ն. — Եթէ իրօք այդպէս ըլլայ,
պէտք է գիտնաս, որ մէկ խաբուե-
լուդ տեղ տասն արդարութեամբ պի-
տի շահիս, ինչպէս որ մէկ խաբելուդ
տեղ տասնալ իրաւամբ պիտի կորսն-
ցնես. սակայն այս ալ գիտնալ պէտք
է, որ չի խաբելը հերիք չէ, չի խաբ-
ուելու չափ ալ իմաստուն լինելով ըդ-
գոյշ պէտք է կենաս ուրիշներուն խա-
բէութիւնը ծանօնալու և հեռանալու.
սակայն ներէ ինձ ըսել, որ եթէ անի-
րաւութեան հակամիտութիւն չունե-
նաս, աշխարհի խաբէութեամբ գործ
տեսնելուն յօժարութիւն չես ցոյց
տար. երանի՜ թէ ամեն մարդ ինքզինք
քննել գիտնար:

Զարեհ. — Խօսքդ շարունակէ, տես-
նենք ինչ վախճան պիտի ունենայ:

Կրի-ն. — Խօսքերս ձեր խօսակցու-
թեան հետ վերաբերութիւն չունի
կ'ըսէք, արդէն խօսածներս՝ խօսելիք
ներուս հետ բաղդատէ ուրեմն: Ի՞նչ
Պ. Օտրեհ, քիչ մը յառաջ խիստ
բարձրէն կը թռչէիր, քու տաղանդն
ու արժանիքը ամենայն չափազանցու-
թեամբ կը հռչակէիր, Պ. Հահապին
սուտ եւ անչափ գովեստը հաճու-
թեամբ կը լսէիր, և անոնց հաւատա-
լով շնորհակալ կը լինէիր. ըստ իս բա-
ւականի չափ խեղճի կորօտ մէկն ըլ-

լալու է. որ երեմն ի վեր ծխուած այդ-
չափ ստուծեան խունկը կը լեւու զիջա-
նի, բայց :

Հակապ. — Կը բողոքեմ, զիս ստախոս
կեղծաւոր կ'անուանես:

Զարեհ. — Կարծեմ խօսելու տեղ թըշ-
նամանելու կը սկսիք:

Կրի-ն. — Ես միշտ կ'ուզեմ, որ խօս-
քին իմաստը իր յատուկ բառերովը
բացատրեմ. և դուք կը ներէք, եթէ
բաժնի ճշմարիտ է, պէտք չէք զայրա-
նալ. քանզի խօսք սուրիք, որ ճշմար-
տութիւնը սիրով պիտի լսէք. իսկ ե-
թէ սուտ կամ սխալ է, դարձեալ պէտք
չէք վրդովիլ, այլ հերքել, սակայն զար-
մանալու բան է այս, որ ես սկիզբէն
զգուշացուցի, և դուք դեռ խօսքս չի
լրացուցած գրգռուելու կըսիս: Բայց
պէտք է գիտնաք որ ըսածներս դեռ
սկիզբն է երկանց:

Զարեհ. — Զե՛մ . . . շարունակե-
ցէք :

Կրի-ն. — Բայց, թէ որ դու անոր
կշռածէն քիչ մ'ալ պակաս խելացի,
ճարպիկ, հանճարաւոր, և այլն և այլն
ըլլայիր, անշուշտ պիտի նշմարէիր նա-
րա խօսքերուն մէջի չափազանցու-
թիւնը, և համեստութեամբ պէտք էիր
մերժել. զայս չընելով քու սնասիր-
ծութիւնդ յայտնեցիր:

Զարեհ. — Երեցէք, այդ չափ անբա-
ղաքալար ըլլալդ չէի գիտեր:

Կրի-ն. — Զոգ չէ, ինչ կ'ուզես ըսէ.
միայն մի զայրանար, որպէս զի խօս-
քերուս ներքին հոգին իմանաս, ես ա-
պահով եմ, որ վերջը կը զղձաս վատա-
բանութիւն ընելուդ վրայ. իմ այժ-
մեան գործածելիք քաղաքալարու-
թիւնս խօսքերուս ճշմարտութիւնը
պահելէն զատ ուրիշ բան չի կրնար
ըլլալ. ուստի կը խնդրեմ քիչ մը եր-
կայնամիտ եղիր, որ գործերդ ալ քն-
նենք: Երգ՝ բանի որ դուք խիստ չա-

փառանց դատարար մը, համարու մ' մը
ունիք ձեր գործոց վերայ, և քանի որ
յանկրաւի կը դատէր ազգը, իբր թէ
ձեր արդիւնքը չէ ճանչցած, ատով
իրաւունք կուտար ինձ յայտնել ձեր
գործոց բուն չափը, և կշռել ձեր ար-
ժանիքը: Դուք ազգային գործոց մէջ
խիստ աննշան տեղ մի կը բռնէք, եր-
բեմն ուսուցչութիւններ ըրիք չգիտ-
ցածնիդ սովորեցնելուդ համար...:

Զարեհ. — Կ'անիրաւիք Պ. Կորիւն,
ինձ կ'ընէք թէ մի զայրանաք, բայց
միթէ չգիտէք, որ դատարաններուն
մէջ հոգիս բերանս կուգար, խօսելով
բերանս կը փրփրէր, լրաժո հասկացը-
նելու համար այնչափ օրինակներով և
պատմութիւններով կը համոզէի, որ
դատիս որոշեալ ժամանակը կը լրանար
և ես չէի գգար. միթէ չե՞ս գիտեր, որ
շատ անգամ աշակերտաց հետ վիճա-
բանութեան կը բռնուէի եւ անոնց
օգտին համար՝ խօսելու թողտուու-
թիւն կ'ընէի, մինչև անգամ դաս տա-
լու ալ ժամանակ չէր մնար, գիշեր և
ցերեկ դատատետր համառօտելով և
օրինակելով աչքի լոյս կը թափէի և
միտք կը հոգնեցնէի, այսչափ և դեռ
ևս շատ ու շատ աւելի անձնութիւն-
թիւններ կ'ընէի և դու զանոնք կ'ու-
րանաս:

Կորիւն. — Ե՛ս, բաժնիդ ճիշդ է,
բայց այդ ամենը իմ ըսածս կ'ապա-
ցուցանեն, դատատետր կ'օրինակէիր,
աշակերտաց գործ պատրաստելու, այլ
զանոնք բացատրելու համար, ինչպէս
կը խոստովանիք, միշտ խնդիրէն դուրս
կ'ելէիք և դասերդ ապարդիւն կը լի-
նէր. աւելի վստան այն տեղն է, որ ինչ-
պէս ըսի՝ չըսովորածդ սովորեցնել ու-
զելով աշակերտաց միտքը կը խանգա-
րէիր, որուն արդիւնքը ոչ ինչ և հե-
տեւութիւնը վնասակար էրաւ: Դուք
ձեր լեզուի ճարտարութեան փառսհա-

յած, պատրուակներով ու ճարտիկու-
թեամբ շարունակ աս ու ան խաբե-
լու զգալած էք: Ղշմարտութեան
վրայ կը ծառէք, առանց զայն ընդու-
նելու և գործածելու, բարոյականը կը
դրուատէք, բայց գործով անմեղները
կը գայթակղեցնէք, իսկ երբ յայտնը-
ւի, խկայն զայն պատրուակելու եւ
զձեզ արդարացնելու համար ձեր ծը-
նօտին զաբանակները կը լարէք, լեզու-
նիդ կը սրէք, ճարտիկ ճամարտակու-
թիւնն ու խաբէութիւնը օգնու թեան
կ'առնուք և շատ անգամ ալ կը յա-
ջուրէք:

Զարեհ. — Ի՛նչ, տակաւին չըվերջա-
ցաւ, համբերութիւնս կը հասնի:

Կորիւն. — Ի՛նչ ըսե՛լիք ունիմ, քիչ մի
համբերէ: Պարտք և իրաւունք հա-
մարեալ թէ միշտ կը քարոզէք և միշտ
ալ ձեր պարտուց կը ժխտէք. դուք
այնպէս համոզուած էք, որ միայն ուրիշ
ձեզ պարտական է, և դուք միշտ իրա-
ւունք ունիք: Ուրիշն գործեր կը յան-
ձնէք և բարեկամութեան սիրովը կը
պարտաւորէք որ կատարեն. իսկ դուք
առ այն ունեցած պարտաւորութիւն-
ները կը զանաք, ուրիշին ձեր պատ-
ճառաւ խայտառակ և անարտօն լի-
նելը բնաւ հոգեբնիդ չէ. ասոնք պար-
տազանցութիւն չեն, հապա ի՛նչ են,
գործի անպիտանութիւն չեն, ինչ են
Լճը ամեն ժամանակ թէ՛ ուսուցչու-
թեանցդ, թէ՛ տեսչութեանցդ և թէ՛
ուրիշ իրեն համար աշխատած մանր
մուկը գործոցդ մէջ, ոչ վարձք և ոչ
ձեռնադրութիւն զոսցած է. այլ միշտ
չափէդ ու արժեքէդ աւելին տուած
է, և դուք բնաւ իրեն համար կորուստ
մի ըրած չէք: Ե՛րբ քանի որ կ'ուրա-
նաք ազգին շնորհքը, ըրածնիդ ասպե-
րախոտութիւն չէ: Պատրուակ է նաև
այն, որ իբր թէ ազգին անշարժու-
թեան վրայ կը ցաւիք. րնդ հակառու-

կրն, ես գիտեմ, որ դուք ազգի շարժումն, լուսաւորութիւն, յառաջագիմնութիւն և այլն, այս ամենը միմիայն ձեր շահուց նպատակով բաներ կը հասկնաք, չգիտնալով, որ չօգնողը օգնութեան արժանի չէ. իսկ ազգին բուն լուսաւորութիւնը բնաւ հոգերնիդ չէ, մանաւանդ ձեր օգտին վնաս ալ կը համարիք զայն։ Այսքան անիրաւութիւն հիմնուած դործոց հետեւանքն ասկէ աւելի ի՞նչ պիտի լինէր։ Անշուշտ կարծեմ ալ ըսածներուս ճշմարտութիւնը կրդգաք և չէք ստիպել զիս ապացոյցներու ձեռք զարնել։

Զարեհ. — Դուք ապացոյցով չէք խօսիր, ձեր մէն մի խօսքերը պատգամներ են, սխառ, փաստ և ապացոյց ձեզ համար ոչինչ բաներ են, դուք միայն կը խօսիք, կ'որոտաք, կը շանթէք և միշտ կըտապալէք, աչքերնուդ բան չերեւիր, բայց թէ որ ինչ ալ հարցը նէք, դուք ալ անմիտ, տգէտ, անգործ, անպիտան, տմարդի և խաւարամիտ էք. արդէն ես գիտէի որ քեզ նման նսխապաշարեալ մարդէ մի օգուտ չըլլար, կրդգայի որ քո բարեկամութիւնդ անհաստատ է, բայց կ'ուզէի որ քակտումը քո կողմէդ ըլլար, ինչպէս որ եղաւ։

Կրիստ. — Ես յառաջ ալ ըսի, որ մեր խօսակցութիւնը մեր բարեկամութեան թող չդադարէ, ինչ կ'ուզես խօսէ, միայն սէրն ըլլայ շարժող եւ ոչ զոյրութի կիրքը։ Ես չտի թէ գիտնական եմ, բայց խենդ ալ չեմ. ես գործունէութեանս և պիտանաւորութեանս վրայ չըսարծեցայ, բայց դուք թէ այդպէս եղած ըլլամ, սակայն ճիշտ է միշտ գործօն և պիտանաւոր լինել, ես կրդգամ որ տմարդի չեմ, խաւարամիտ ալ չեմ, դքեղ յանդիմանելս զիս այս սրկաւորութեանց չենթարիկեր. բարեկամութեան կոտոր, որ սէրն է, ես տակաւին

չը խզեցի, ուրեմն անհաստատը իմն չէ. ես նախապաշարեալ ալ չեմ, բայց չգիտեմ թէ ինչմէն սպասած օգուտդ ի՞նչ է, ես խզում կ'սրող եմ վիայել, որ մինչ ցարդ բարեկամութեան բոլոր պայմաններուն համաձայն վարուած եմ. քեզ հետ, բուն իսկ քո զանցառու գտնուած ատենդ ալ։

Զարեհ. — Դո՛ւ եմ ըստ ամենայնի, բայց շատ խիստ էք։

Կրիստ. — Ես ի՞նչ ընեմ, որ ճշմարտութեան լեզուն այն է, ե. դուք տըրամաբան լինելով սկիզբէն վիայեցիք թէ, հաճելի է ձեզ ճշմարտութիւնը մինչեւ անգամ եթէ ձեր անձին հաւառակ ալ լինի։

Զարեհ. — Այո, բայց տրամաբանութիւնը ապացուցութեամբ կը խօսի։

Կրիստ. — Ուրեմն տակաւին շօշափելի պատմական ապացոյցներ կ'ուզէք, բայց ես կը ցաւիմ, որ ատով աւելի պիտի վրդովիք, մանաւանդ պիտի ըստիպուիք յականէ յանուանէ տեղեր, անձեր և դէպքեր մէջ բերել, որ աւելի սատարի կերպիւ թէ ձեր և թէ այլոց անձնասիրութեանը պիտի դըպչինք. ուստի բարեկամաբար կը յորդորեմ, որ այս դիշեր խզիդ հետ խօսիս, ըսածներս որոճաս, և եթէ տակաւին տարակոյտ ունենաս, ուրիշ անգամ առանձին քեզի հետ կը խօսինք։

Զարեհ. — Եւ, ո՛չ, կը խոստովանիմ, որ ալ ապացոյցի կարօտութիւն չունիմ, քանզի ըսածներդ արդէն պատկերի պէս նկարուած են մտայն առջեւ ամենայն հանգամանօք։

Շահապ. — Ի՞նչ, այս ըսածներն ամենքն ալ ընդունեցիր, քո տեղդ իմ ցատուժն կը շարժի և դու կը զեջանիս։

Զարեհ. — Ի՞նչ ընեմ, լռելն աւելի օգտակար կը գտնեմ առ այժմ։

Կրիստ. — Այդպէս շուտով մի՛ դադարանաք, Շահապ, ըսածներուս մեծ

մասը քեզ ալ կը վերաբերին, վասն զի քո պարծանքդ ու գանգատներդ ալ անկէ պակաս անիրաւ չեն :

Շահապ . — Ի՞նչպէս :

Կրի-ն . — Դու երկու արհեստ ունիս, երկուքն ալ թերի, այնու ամենայնիւ դու գրեզ առաջին կարգի արհեստաւոր կը համարիս, արհեստապետներդ քանի անգամ քեզ ազդաւորութիւն ըրին, և յորդորեցին որ միայն մէկը գործածես, որուն մէջ քիչ մի աւելի յաջողակութիւն ունիս, որով անշուշտ աւելի պիտի շահէիր, դու մտիկ չըրիր, այլ անխոհմամբար սկսար փոանգաւոր անզգուշութեամբ արհեստներդ գործածել, և աստ և անդ ճարտար արհեստապետները վար զարնել, ատով չէիր գիտեր, որ քո անուշդ կը վատահամբաւես : Ինչ և իցէ, բաւական ժամանակ խտրելով խտրելով յաջողեցար և կարծեցիր թէ կը շահիս : Կղեր մի, որ մեծ ընկերութեան մի գործակալն էր, չգիտնալով քու բուն արժէքդ, գրեզ իբր կատարեալ արհեստաւոր վարձեց և չափազանց սուղ ամսականով զրկեց այն տեղ, ուրկէ որ ուզէր էին, դու խոհեմութիւն չըրիր, ամսականիդ չափազանցութեանը վատահելով խանութ եւ տուն կրեցիր օտար երկիր, այն տեղ քո սակաւ և անպիտան նիւթերդ նոցա վերայ սուղ գնով ծախեցիր, ճանբուղծախքը անոնցմէ լիութի ստացար, ձրի բնակարան և մանր կարասիներ պահանջեցիր առիր, և բաւական ժամանակ կենալէդ վերջը յիշելու անարժան առիթներ տուիր, սրարտաւորութիւններէդ թերացար, որով ստիպեցիր զանոնք, որ պատուաւոր կերպով ճանբայ տան քեզ, չըսեմ վաճառեն :

Շահապ . — Սինչ ցարդ ինչ և իցէ, բայց այդ տեղ կը շեղիք ճշմարտութենէ . չէ՞ որ գոհունակութեան վկայող իր տուին :

Կրի-ն . — Տուրր դիր այն վկայողիր ըսածդ, և բնաւ խօսքն անգամ մի ըներ, քանպի նորա քո թախանձանքնէրէդ և մէջ ձգած միջնորդներէդ ստիպեալ այնպիսի անձեւ անկանոն վկայող իր մի տուին, զոր ով ալ տեսնայ խեղոյն անկարեւոր լինելը կը ճանչնայ :

Շահապ . — Օտրմանք, թող այդ ալ այդպէս ըլլայ, չարունակէ :

Կրի-ն . — Եսպէս լինելն անհերքելի է : Կար այն տեղէն, հիմա այս տեղ ալ չես դադարիր քո վնասակար գործերէն և անխոհեմ ընթացքէն, որով բոլոր շահածդ կորուսիր : Շարունակ տեղէ տեղ, խանութէ խանութ կը փոփոխիս, չէ թէ գործելու, այլ շամփռելու համար, ուստի ամեն տեղ ալ համարումդ կը կորսնցնես՝ դեռ զայն չգտած, պատիւդ կ'աղարտես՝ դեռ չը նորոգած, ուրեմն ինչո՞ւ կը դանգաժիս, ինչո՞ւ քո անձդ նախ չես դատեր, ինչո՞ւ պակասութիւնդ չես ուղղեր, զուր տեղը բարեկամներէդ ինչո՞ւ կը զրկուիս, մեծ անխոհեմութեանդ մէկն ալ այդ է, որ անոնց սիրտը կը վշտացնես, նորա քեզմէ աւելի քո օգուտդ մտածեր են, անոնց գրեզ տանիլ չուզելը մեծ բարեկամութիւն եւ երախտիք պէտք է համարիս, վասն զի այն տեղ հիմա դու բնաւ պատիւ չունիս, ըզգոյշ կաց եղբայր, յանցանքն ուրանալով կամ ուրիշին վրայ ձգելով, կամ պատրուակելով չարդարանար մարդ, յանցանքն զգալու է, սրտը զայն խոտովանելու է, սրտանց ցաւելու եւ զղջալու է, անգամ մ'ալ չընել առաջադրելով ճգնելու է բոլոր զօրութեամբ և չար ունակութեանց դէմ մաքառելու է : Եստուհետեւ գոնէ խելքդ գլուխդ ժողովէ, գործոյդ եւ ընտանեացդ հաւատարիմ եղիր, արդարութիւնն ու ճշմարտութիւնը հիմին ըրէ գործոյդ և խօսքերուդ, աչխտութիւն մի խնայեր, յ'ստուած

ապաւինիր՝ և Պ. Օլարեհին խրատու-
ցն հետեւէ, քո վնասուցդ պատ-
ճառ դուն ես:

Հակայ. — Այսօրծես թէ կենացս մէջ
աներեւութաբար միշտ հետս եղած
ես, ամեն մանրիկ գաղտնիքներս ալ
գիտես. հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ
Պ. Օլարեհ չուտով համոզուեցաւ,
վասն զի ըսածներէդ կըզգամ, որ եթէ
քիչ մի հակառակիմ, յականէ յանուա-
նէ ամեն բան պիտի նշաւակես, և ա-
հա կը տեսնեմ, որ դու իմ գործերս
ինձմէ լաւ գիտես:

Կրիւն. — Դժբաղդութիւնն այդ է
որ տկարամիտք կը կարծեն թէ իրենց
խաբէական գործերը միշտ թաքուն
կրնայ մնալ, բայց չյայտնուած բան
չը կայ:

Զարեհ. — Ղարաբիկութիւն և լեզ-
ուանիութիւն ճշմարտութեան առ-
ջեւ կը կասին, իրաւունք ունիք Պ. Կո-
րիւն, հանգիստ ապրելուն ճանքան
ուղղութիւնն ու արդարութիւնն է.
պէտք է որ հետեւ ինք, բուն մեր օ-
գուտն ալ զայն կը պահանջէ, կըզգամ,
որ մինչ ցարդ ըրածներէս շահ չեմ
ունեցած, քանզի ինչպէս շահիլս ու
կորսընցնելս ակներեւ կը տեսնեմ:
Ուրախ եմ, որ այսօր ձեզ պատահե-
ցայ, քսնպի նորէն ուրիշ գիտաւո-
րութիւններ ունէի, զորս գործադրե-
լու կ'երթայի, և զորս այժմ կը փոխեմ
և ուղղուիլ կը խոստանամ. ներեցէք
եթէ զձեզ վշտացուցի, մնաք բարեաւ:

Հակայ. — Հնորհակալ եմք, մնաք
բարեաւ:

Կրիւն. — Երանի՛ թէ խոստումնիդ
արդիւնք ունենար, երթայք բարեաւ.
Լստուածով ուրիշ անգամ ուրիշ կեր-
պիւ կը տեսնուինք ձեզ հետ, այն ա-
տեն ես ալ գոհ կը լինիմ և դուք ու-
րախ. յաջողութիւն կը մաղթեմ:

Կորուս Ս.

ԱՆԱՉԱՌ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

Լիզիւն շահը, օգուտը և բարոյա-
կան յառաջագիմութիւնը սրարոք կը
դնեն մեր վնայ՝ մի քանի խօսք ասել
անաչու և անկեղմնակալ ոգւով աղ-
գային ոմանց լրագրաց վնայ, որք իս-
պառ ոտքի տակ առնելով իրենց էա-
կոն պարտաւորութիւնքը, իրենց ըս-
կըզուները և բաւրովին արտաքոյ մարդ-
կային բանաւարութենէ չեն խղճար
հասարակութեան ոգին գայթակղե-
ցնել իրենց գոհհիլ լեզուաւ, զոր
չեմ կարծեր թէ՛ ամենայետին ռամիւ
կըն իսկ գործածէ:

Ինդհանուր կերպով խօսելով՝ ինչ
է հրապարակագրութեան բուն նը-
սրատակը, եթէ ոչ իմաստասիրական
քննադատութեամբ ժողովրդեան մէ-
ջի վտանգաբեր մոլութիւնքն արմա-
տաքի խել, կոյր նախապաշարումներն
խաբառ ջիջել և վստ սովորութիւնքն
անհետել. լուրջ խորհրդածութեամբ
ժողովրդին սրտին մէջ բարւոյն, վսե-
մին և ճշմարտին ոգին զարթուցանել
և անշահատէր ոգւով հասարակու-
թիւնը դէպ ՚ի յառաջագիմութիւն
մղել. ճանչցնել նմա ինչպէս բարեկամ
ներն, նոյնպէս և չարանենդ թշնամի-
ներն: Այրբ ըագրութիւն մը վերի բա-
ուածներն իրեն նշանաբան առնելով՝
անձնական շահը ընդհանուրին շահոյն
զոհէ և անմոլար գիտակցութեամբ և
ճանաչողութեամբ յօդուտ ընդհա-
նուրին խօսի, քննադատէ և վիճաբա-
նի, այն ատեն մենք եւս շատերուն
հետ պիտի ասենք, թէ ՚ըագրութիւն
մի աղգի մի յառաջագիմութեան գըլը
խաւոր պայտաններէն մին է, թէ ՚Լիզ-
գի բարոյականութեան ուղղին և զար-
գացուցին է և թէ երբ հասարակու-
թեան մի () րութեան, Պարբերա-
կաններն ու Հանգէսներն շատնան, նոյն